Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
ապրիլի 18-ի N 390- Ն որոշման

# Ց Ա Ն Կ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանն է տրամադրում հետևյալ տվյալները՝

1) հարկային գործակալների (կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, նոտարների) կողմից 2005 թվականից հետո ներկայացված՝ սոցիալական վճարների հաշվետվություններում ներառված՝

ա. հարկային գործակալի ՀՎՀՀ-ն, անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը),

բ. հարկային գործակալի կողմից վարձու աշխատողներին վճարած եկամուտներից հաշվարկված սոցիալական վճարների չափը՝ ըստ հաշվետու ժամանակահատվածների, ինչպես նաև վարձու աշխատողների (որոնց համար հաշվարկվել են պարտադիր սոցիալական ապահովության վճարներ) թիվը՝ ըստ հաշվետու ժամանակահատվածների,

գ. անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի՝ իր համար կատարած սոցիալական վճարների չափը՝ ըստ հաշվետու ժամանակահատվածների.

2) հարկային գործակալների ներկայացրած՝ սոցիալական վճարների վերջին հաշվետվության հաշվետու ժամանակահատվածը.

3) հարկային գործակալների՝ սոցիալական վճարների գծով ժամկետանց պարտավորությունների չափը՝ 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ.

4) 2006-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիման վրա գործունեությունը ժամանակավորապես դադարեցրած կամ վերսկսած հարկ վճարողների՝

ա. ՀՎՀՀ-ն, կազմակերպության անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը),

բ. գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու օրը, ամիսը, տարեթիվը,

գ. գործունեությունը վերսկսելու օրը, ամիսը, տարեթիվը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ